

## ԹԱՐԳՄԱՆՉԱԿԱՆ ՍԽԱԼՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

### ԱՐԵՎԻԿ ԲԱՍԱԼՅԱՆ

Ամենից հաճախ հանդիպող թարգմանչական սխալներին ու դրանց պատճառներին այս կամ այն չափով անդրադարձել են թարգմանության գրեթե բոլոր տեսաբանները (Բարխուդարով, Ֆյոդորով, Շվեյցեր, Լատիշև, Ռեցկեր ևն): Իրժի Լևին այդ սխալները բաժանում է մի քանի հիմնական խմբերի.

- բազմիմաստության հետևանքով առաջացող սխալներ,
- համանուն-հարանունների պատճառով առաջացող սխալներ,
- համատեքստը չհասկանալուց (սխալ մեկնաբանելուց) առաջացող սխալներ,

- հեղինակի մտահղացումը չհասկանալուց, նրա լեզվաոճական առանձնահատկությունները հաշվի չառնելու հետևանքով առաջացող սխալներ ևն<sup>1</sup>:

Ն. Գարբովսկին «Թարգմանության տեսություն» ծավալուն դասագրքում մի ամբողջ գլուխ է նվիրել թարգմանչական սխալներին ու դրանց պատճառներին: Նրա դասակարգումն առանձնապես չի տարբերվում Լևիի դասակարգումից.

- բնագրի լեզվի ոչ բավարար իմացություն (համանուն-հարանուններ, բազմիմաստություն, փոխաբերական իմաստ, քերականական իրողություններ ևն),

- ճանաչողական (կոգնիտիվ) փորձի պակաս. բնագրում պատկերված իրականության ոչ բավարար իմացություն,

- հեղինակի մտահղացումը չհասկանալուց առաջացող սխալներ,
- բնագրի հեղինակի լեզվաոճական առանձնահատկությունները չհասկանալու հետևանքով առաջացող սխալներ ևն<sup>2</sup>:

Այս բաժանումը, իհարկե, պայմանական է, քանի որ սրանք փոխկապակցված են: Համանուն/հարանունների հետևանքով առաջացող սխալներ հատկապես շատ են լինում ցեղակից լեզուներից թարգմանելիս, երբ նույն բառը մոտ լեզուներում միանգամայն տարբեր իմաստներ ունի: Յուզին Նայդան, անդրադառնալով ցեղակից լեզուներից թարգմանություններին, նշում է, որ ճիշտ չէ այն պատկերացումը, թե մոտ լեզուներից թարգմանելիս սխալներն անհամեմատ քիչ են լինում: Ամենալուրջ վտանգներից մեկն այս դեպքում «թարգմանչի կեղծ բարեկամներն» են՝ հնչյունական կազմով մոտ կամ նման բառերը, որոնք իրականում միշտ չէ, որ համարժեքներ են<sup>3</sup>:

Օրինակ՝ շատ են համանունները ռուսերենում և բուլղարերենում

<sup>1</sup> Տե՛ս Левый И. Искусство перевода. М., 1974, էջ 60-76:

<sup>2</sup> Տե՛ս Гарбовский Н. К. Теория перевода. М., 2004., էջ 514-537:

<sup>3</sup> Տե՛ս Юджин А. Найда. К науке переводить. Մեջբերումը «Лингвистические аспекты теории перевода» քրեստոմատիայից: Եր., 2007, էջ 11-12:

(հիարկե, նաև այլ սլավոնական լեզուներում).

ռուս.	բուլղ.
иска́ть- փնտրել	иска́м*- ուզել, ցանկանալ
гора́ -սար	гора́-անտառ
дыня -սեխ	жад(-ен)-ծարավ (ած.)
дыня-ծմերուկ	жадн(-ый)-ազահ, ժլատ
конец-վերջ, ավարտ	конец-ասեղ
дума-հնց. միտք	дума-բառ ևն <sup>4</sup> :

Ռուսերենից բուլղարերեն և հակառակը թարգմանելիս երբեմն դժվարություններ են ծագում նաև հատուկ անունների դեպքում: Օրինակ՝ ռուսերենում **Петя, Ваня** արական անուններ են, իսկ բուլղարերենում՝ իգական: Ու քանի որ ռուսերենն ու ռուսական մշակույթը մեզ՝ հայերիս, ավելի ծանոթ է, այս անունների թարգմանության ժամանակ մեզ համար ևս դժվարություններ են առաջանում. **госпожа Ваня** կամ **տիկին Վանյան** ծիծաղելի է հնչում թե՛ ռուսերեն, թե՛ հայերեն:

Վերջին ժամանակներս ավելացել է զավեշտական թարգմանությունների թիվը, քանի որ շատացել են համացանցային զանազան թարգմանչական ծառայություններից օգտվողները: Մի քանի տարի առաջ գրեթե բոլոր լրատվամիջոցները գրեցին մի այդպիսի զավեշտական «թարգմանության» մասին. **окружающая среда**-ն (շրջակա միջավայր) մեր նախարարներից մեկը թարգմանել էր «շրջապատող չորեքշաբթի»: Կամ google թարգմանիչը անգլերենից **Good Monday**-ն հայերեն բառացի թարգմանում է «բարի//լավ երկուշաբթի», ռուսերենից **Чистый Понедельник**-ը՝ «մաքուր երկուշաբթի», այնինչ ճիշտը «Ավագ երկուշաբթի»-ն է:

Տարածված սխալներից է նաև այն դեպքը, երբ բազմիմաստ բառի տարբեր իմաստներից թարգմանիչն ընտրում է տվյալ համատեքստում ոչ ճիշտ համարժեքը:

Բոլորին հայտնի «չոր գինի» արտահայտությունն իրականում այսպիսի սխալի հետևանք է: Սխալն ամենայն հավանականությամբ հայերենին է անցել ռուսերենի միջոցով. ֆրանսերեն **vigne seche** կամ անգլերեն **dry wine**-ը ռուսերեն թարգմանվել է **сухое вино**, որից էլ հայերենում հայտնվել է «չոր գինի»-ն (**dry** բառը բազմիմաստ է՝ «1. չոր, անջուր, 2. դառը (գինի, շոկոլադ)» ևն):

Բ. Տոմաշևսկին օրինակ է բերում ռուսերենում ֆրանսերենից բառացի պատճենված **не в своей тарелке** դարձվածքը (ֆրանսերեն՝ **ne pas dans son assiette**): Սխալ թարգմանության պատճառը ֆրանսերեն բառի բազմիմաստությունն է՝ **assiette** նշանակում է «1. պնակ, ափսե, 2. դրություն, դիրք, 3. վիճակ, տրամադրություն» ևն<sup>5</sup>, սակայն այս դարձվածքն արդեն վաղուց գործածական է դարձել ռուսերենում:

Ընդհանրապես դարձվածքների թարգմանությունն առանձնակի

\* Բուլղարերենում բայը չունի անորոշի ձև (ինֆինիտիվ), որպես ինֆինիտիվ է օգտագործվում ներկայի եզակի 1-ին դեմքը:

<sup>4</sup> Տե՛ս «Руско-български, българско-руски джобен речник». София, 2009:

<sup>5</sup> Այս մասին տե՛ս **Томашевский Б.** Стилистика. Л., 1983, էջ 239:

դժվարություն է ներկայացնում, քանի որ դրանց մեծ մասը սերտորեն կապված է տվյալ ազգի կենցաղի, սովորությունների, ծեսերի, լեզվամտածողության հետ, և սովորաբար դրանց բառացի թարգմանությունը անհեթեթ է հնչում թարգմանության լեզվում:

Երբ երկու մշակույթներ փոխկապակցված են, բայց տարբեր են լեզուները, թարգմանիչը ստիպված է բազմաթիվ փոխակերպումներ անել, սակայն երկու մշակույթների միջև ընդհանրությունները բավականին հեշտացնում են թարգմանչի գործը: Անհամեմատ դժվար է, երբ տարբեր են ոչ միայն լեզուները, այլև մշակույթները, քանի որ երկու մշակույթների միջև տարբերություններն ավելի մեծ դժվարություններ են ստեղծում, քան երկու լեզուների միջև տարբերությունները:

Թերևս ավելի կարևոր են բնագրի իրությունները (ռեալիաներ), հեղինակի մտահղացումը, նրա լեզվաոճական առանձնահատկությունները չհասկանալուց առաջացող սխալները: Թարգմանություն անելիս մեծ դեր ունեն ոչ միայն բնագրի լեզվի լավ իմացությունը, այլև արտալեզվական գործոնները՝ թարգմանչի պրոֆեսիոնալիզմը, նրա ֆոնային գիտելիքը, տվյալ ազգի պատմության, մշակույթի ու կենցաղի, ժամանակաշրջանի ևն իմացությունը:

Սխալներ անում են ոչ միայն ոչ պրոֆեսիոնալ, «պատահական» թարգմանիչները, այլ երբեմն նաև բավականին փորձառու թարգմանիչները:

Բերենք օրինակներ Սերգեյ Եսենինի բանաստեղծությունների հայերեն թարգմանություններից: Սխալները մի քանի հիմնական խմբի ենք բաժանել՝ առաջնորդվելով Լևիի և Գարբովսկու դասակարգմամբ:

1. Համանուն/հարանունների հետևանքով առաջացած սխալներ:

Я люблю этот город вязевый....(I, 127)<sup>6</sup>:

Ռուսերենում կան երկու տարբեր բառեր՝ **вяз**՝ «ծփի», (որից՝ **вязовый** ածականը) և **вязь**՝ լեզվ. 1. փակագրություն, փակագիր, 2. հյուսագիր, զարդագիր (որից՝ **вязевый** ածականը): Բնագրում խոսքը «զարդագիր, հյուսագիր» գնբեթներով ասիական քաղաքի մասին է, իսկ թարգմանիչները նույն սխալն են արել՝ կարծելով, թե խոսքը ծփիի մասին է.

Սիրում են քաղաքն այս՝ ծփիներով լիքը (Պ. Ս., 282)<sup>7</sup>:

Եվ

Սիրում են քաղաքն այս ծփիների (Հր. Թ., 29):

Կամ՝ «Одержимый тяжелой падучей, Я душой стал как желтый скелет» տողը (I, 146) Հր. Թամրազյանը թարգմանել է.

Գերված ահեղ մի անկումից՝

Հոգով դեղին կմախք դարձա (45):

**Падучая** բառի արմատն իհարկե **падать**՝ «ընկնել»-ն է, սակայն բառը նշանակում է «ընկնավորություն, ցավազարություն», ոչ թե «անկում»:

<sup>6</sup> Սերգեյ Եսենինի բանաստեղծությունները մեջբերվում են ըստ՝ **Есенин С.** Собр. соч. в 2-х томах. М., 1990: Փակագծում նշվում է հատորը և էջը:

<sup>7</sup> Վահագն Դավթյանի, Պարույր Սևակի, Համո Սահյանի և Գևորգ Էմինի թարգմանությունները մեջբերվում են ըստ՝ **Սերգեյ Եսենին**, Հատընտիր, Եր., 1986, Հրաչյա Թամրազյանի թարգմանությունները՝ ըստ՝ **Սերգեյ Եսենին**, Բանաստեղծություններ, պոեմներ, Եր., 1982: Փակագծում նշվում է էջը:

Ուրիշ օրինակ.

Лишь осталась одна манишка... (I, 146):

Թարգմանիչը կարծել է, թե **манишка-ն монета** բառից է, և սխալ է թարգմանել.

Մի քիչ մանրոն մնաց ինձ լոկ (Հր. Թ., 46):

**Манишка-ն** տղամարդու վերնաշապիկին կարվող կամ ամրացվող սպիտակ կրծքամասն է: Ա. Ղարիբյանի ռուս-հայերեն բառարանում **манишка-ն** թարգմանված է «կրծքակալ», որ լավագույն տարբերակը չէ, որովհետև «կրծքակալ» է կոչվում նախ և առաջ կանանց ներքնագգեստի տարրերից մեկը: Այդ պատճառով թերևս չի կարելի ճիշտ համարել նաև Գ. Էմինի թարգմանությունը, չնայած նրա տարբերակում բառարանում նշված համարժեքն է.

Մնաց կրծքակալն այս անցյալ դարու (291):

Այս դեպքում **манишка-ն** կարելի էր փոխարինել տղամարդու հագուստի ուրիշ տարրով, որովհետև բառն այստեղ առանձնապես կարևոր տեղեկություն չի պարունակում:

Մի այլ բանաստեղծության մեջ թարգմանիչը շփոթել է **кобель` «որձ շուն»** և **кобыла` «զամբիկ, էգ ձի»** բառերը.

Каждому здесь кобелю на шею

Я готов отдать мой лучший галстук (I, 126):

Ու պատրաստ եմ փողկապս նվիրել

Ինձ հանդիպած առաջին իսկ **ձիուն** (Հր. Թ., 27):

Ուրիշ օրինակ.

Хромой красноармеец с ликом сонным,

В воспоминаниях морщина лоб,

Рассказывает важно о Буденном...(I, 269):

Եսենինը կարմիրբանակայինին նկարագրում է **сонный лик** բառերով. **лик-ը** (1. դեմք, երես, 2. սրբապատկեր) բարձր ոճի բառ է, իսկ **сонный` քնատ, քնաթաթախ** բառի գործածումով բանաստեղծը ցույց է տալիս իր հեզմանքը նրա ու նրա նմանների նկատմամբ:

Վ. Դավթյանը **сонный-ն** թարգմանել է «երազուն»` շփոթելով **сон** բառի երկու նշանակությունները` «1. քուն, 2. երազ», և բնագիրն աղավաղվել է. չկա Եսենինի հեզմական, ծաղրական վերաբերմունքը.

Ու երազուն դեմքով մի կաղ բանակային

Կնճռոտում է ճակատն հիշողությամբ տարված...(96):

2. Բառի մասնավոր նշանակության սխալ ընտրություն. երբ բնագրի բազմիմաստ բառի համար թարգմանիչն ընտրում է տվյալ համատեքստում ոչ ճիշտ տարբերակ:

Բերենք օրինակներ.

Золотая дремотная Азия

Опочила на куполах (I, 127):

**Опочить** բառն ունի «1. ննջել, քնել, հանգստանալ, 2. փխր. հանգչել, մեռնել» նշանակություններ: Պ. Սևակն ընտրել է «մեռնել» իմաստը.

Ոսկե Ասիան ինքն է, քնկոտ Ասիան ինքը,

Որ մեռել է նրա գմբեթների վրա (282):

Այս դեպքում Սևակի ընտրությունը ճիշտ չէ. խոսքը «ծուլլ, ալարկոտ,

քնկոտ» Ասիայի մասին է (*дремотная*), որը «նիրհել, քնել է գմբեթներից»:  
Եվ հետո, անհասկանալի է «քնկոտ Ասիան...մեռել է գմբեթների վրա»  
պատկերը:

Համենատելու համար բերենք մյուս թարգմանչի տարբերակը.

Ոսկեգույն, նիրհուն Ասիան է էլի

Հին գմբեթներից *երազուն թառել* (Հր. Թ., 29):

Բառարանային ճշգրիտ համարժեքի փոխարեն թարգմանիչն ընտրել է այլ՝ բառարանով չնախատեսված, սակայն բնագրի պատկերը լիովին փոխանցող տարբերակ:

Կամ՝

Ведь я почти для всех здесь *пилигрим* угрюмый

Бог весть с какой далекой стороны (I, 268):

**Пилигрим** բառն ունի «1. օտարական, պանդուխտ, 2. ուխտավոր, ուխտագնաց» նշանակություններ:

Թամրազյանը **пилигрим**-ը թարգմանել է «ուխտավոր» տարբերակով.

Շրջում եմ՝ ասես մռայլ ուխտավոր,

Հեռու եզերքից էս կողմերն հասած (77):

Այս համատեքստում թարգմանչի ընտրությունը ճիշտ չէ, որովհետև բնագրում խոսվում է այն մասին, որ տարիների բացակայությունից հետո հայրենիք վերադարձած հերոսը իրեն «օտար, օտարական» է զգում, հին ծանոթները չկան կամ էլ մոռացել են նրան («Я никому здесь не знаком. ...В своей стране я словно иностранец»):

Ոչ ճիշտ հոմանիշ է նաև հետևյալ տողերի թարգմանության մեջ.

Этот пыл не называй судьбою,

Легкодумна вспыльчивая связь...(I, 146):

**Пыл**-ը բազմիմաստ բառ է՝ «1. եռանդ, ավյուն, խանդավառություն, 2. կիրք, 3. *հնցծ*. կրակ, հուր»: Համատեքստից պարզ է, որ խոսքը կրքի մասին է, սակայն թարգմանիչն ընտրել է այլ հոմանիշ՝ կրակ.

Դու այս կրակը բախտ չհամարես,

Սա լույս մի կապ է՝ թեթև ու հեշտ (389):

Այս ընտրությունը մի տեսակ անհասկանալի է դարձնում տողերը՝ «այս կրակը բախտ չհամարես»: Այնքան էլ ճիշտ չի ընտրված նաև *судьба* բառի համարժեքը՝ «բախտ» (*судьба* - «1. ճակատագիր, 2. բախտ»): խոսքն ավելի շուտ ճակատագրի մասին է:

Նույն կերպ ոչ ճիշտ հոմանիշ է ընտրված նաև հետևյալ տողերի թարգմանության մեջ.

Не больна мне ничья измена,

И не радует легкость побед (II, 146):

Համատեքստը հուշում է, որ խոսքը կնոջ դավաճանության մասին է, իսկ «խարդավանք» հոմանիշը այս համատեքստում ճիշտ չէ.

Էլ ցավ չի բերում խարդավանքը ինձ,

Էլ սուտ հաղթությամբ չեմ ուրախանում (Վ. Դ., 293):

3. Համատեքստը սխալ մեկնաբանելուց, բնագրի իրությունները չհասկանալուց առաջացող սխալներ:

И, чтоб прошлое не любя.

Ты уйти не смогла б к другому (I, 141):

Այստեղ խոսքն ուղղված է կնոջը, նրա անցյալի մասին է խոսում բանաստեղծը: Հ. Սահյանի թարգմանության մեջ սխալ մեկնաբանություն է.

Որ, չսիրելով անցյալս անվայել,  
Չկարենայիր սիրել ուրիշին (286):

Դուրս է գալիս, որ բանաստեղծը խոսում է իր անցյալի մասին: Սխալ մեկնաբանությունն է պատճառը նաև «անվայել» ածականի հավելման:

Կամ՝ բանաստեղծություններից մեկում այսպիսի տողեր կան.

Сегодня цветущая липа  
Напомнила чувствам опять,  
Как нежно тогда я сыпал  
Цветы на кудрявую прядь (2, 138):

Թարգմանության մեջ հերոսը ծաղիկներ է շաղ տալիս ոչ թե սիրած կնոջ վարսերին, ինչպես բնագրում է, այլ ինքն իր գլխին, որ առնվազն տարօրինակ է.

Լորենին հիշեցրեց ինձ կրկին,  
Թե ինչ քնքշությամբ էի ես  
Ծաղիկներ շաղ տալիս իմ գլխին (Հ. Ս., 370):

Երբեմն բնագիրը կարող է տարբեր մեկնաբանությունների տեղիք տալ: Օրինակ՝ Եսենինն այսպիսի տողեր ունի.

Чужие губы разнесли  
Твое тепло и трепет тела.  
Как будто дождик моросит  
С души, немного омертвелой (I, 145):

Վ. Դավթյանի մեկնաբանությամբ՝ վերջին երկու տողերը վերաբերում են քնարական հերոսին.

Կարծես թե բարակ անձրև է մաղում  
Հոգուց իմ՝ արդեն կիսով չափ հանգած (290):

Հր. Թամրազյանի մեկնաբանությամբ՝ տողերը վերաբերում են կնոջը, որին դիմում է հերոսը.

Ու անձրևում է հիմա մեղմորեն  
Քո աշնանային, մահացող հոգին (44):

Կարծում ենք՝ ավելի ճիշտ է Թամրազյանի մեկնաբանությունը. այդ են հուշում նաև հաջորդ տողերը՝ “Ну что ж! Я не боюсь его. Иная радость мне открылась”:

Սեր չկա, մնացել է լոկ սովորությունը՝ “И с тобой целуюсь по привычке, Потому что многих целовал” (II, 149): Ու մի տեսակ անտարբերությամբ բանաստեղծը հաշտվում է նաև դրա հետ.

И любовь, не забавное ль дело?  
Ты целуешь, а губы как жесть (I, 146):

Այս դեպքում ևս թարգմանիչները տարբեր մեկնաբանություններ են արել:

Գ. Էմինի մեկնաբանությամբ՝ **губы как жесть** -ը վերաբերում է կնոջը.

Իսկ սերը, մի՞թե ծիծաղելի չէ,  
Թիթեղից են քո շուրթերը կարծես (291):

Հր. Թամրազյանի մեկնաբանությամբ՝ **губы как жесть**-ը վերաբերում է և՛ կնոջը, և՛ բանաստեղծության հերոսին.

Մի՞թե խաղ չի և մեր սերը,  
Եվ շուրթերը՝ մաշված թիթեղ (45):

“Письмо к женщине” բանաստեղծության մեջ Եսենինն այսպիսի տողեր ունի.

Теперь в советской стороне  
Я самый яростный попутчик (I, 289):

Այստեղ խոսքը դարասկզբի այսպես կոչված «ուղեկից գրողների» մասին է. խորհրդային կարգեր հաստատվելու առաջին տարիներին ուղեկից (**попутчик**) էին կոչում այն գրողներին, որոնք թեև բոլշևիկ չէին, բայց համակրում էին կամ գոնե դեմ չէին բոլշևիկների իշխանությանը: Թամրազյանի թարգմանությունը անընդունելի է.

Ու սովետական ափերը հասած  
Ամենախիզախ *ճավորդ* եմ դառել (92):

Երբեմն լինում են դեպքեր, երբ բնագիրը տեղիք է տալիս ամենատարբեր մեկնաբանությունների, և նույնիսկ համատեքստը (լայն թե մեղ առումով) չի օգնում բացահայտելու այս կամ այն պատկերը, նախադասությունը, տողը: Այդպես է, օրինակ, “Черный человек” պոեմի քառատողերից մեկի դեպքում.

Голова моя машет ушами  
Как крыльями птица.  
Ей на шее ноги

Маячить больше невмочь (I, 450):

Ռուս գրականագետներն ու լեզվաբանները բազմիցս փորձել են «վերծանել» այս պատկերը: Ն. Ասենն, օրինակ, կարծում է, որ պետք է լինի **на шее ноги**<sup>8</sup>: Վ. Վոլովինն առաջարկում է կարդալ ոչ թե **ноги**, այլ **ночи** (Եսենինի ձեռագրի **г**-ն ու **ч**-ն շատ մնան են)<sup>9</sup>: Ա. Մարչենկոն համոզված է, որ **шея ноги**-ն բանաստեղծի փիլիսոփայության բնական արտահայտությունն է. «Մարդ-ծառի պատկերի հետ է, իմ կարծիքով, կապված «աներևակայելի» **шея ноги**-ն»<sup>10</sup>: Ա. Սուբբոտինն այլ կերպ է մեկնաբանում: Նա ասում է, որ «ռուսերենում կա **маять (маяться)**՝ «տանջել (տանջվել)» և **маять**՝ «թափահարել, երևալ», որից կազմվել են **маятник**, **маяк** բառերը: Եթե ընդունենք, որ բնագրում **маячить**, **быть маяком**, **виднеться** նշանակությունն է, ուրեմն տողը պետք է կարդալ “Ей на шее ноги́ маячить”, իսկ եթե **маячить**, **мучиться**, **терпеть** նշանակությունն է, ուրեմն “Ей на шее но́ги маячить”<sup>11</sup>:

Այս դեպքում թերևս անխուսափելի է բնագրի անհասկանալի, տարօրինակ պատկերի բացթողումը թարգմանության մեջ.

Գլուխս, թափ տալով ականջներն իր երկու,  
Թվում է, հավքի պես  
Պատրաստվում է թռչել (Գ. Է., 432):

4. Հեղինակի լեզվաոճական առանձնահատկությունները, նրա մտահղացումը, ստեղծագործության ընդհանուր համատեքստը հաշվի չառնելը

<sup>8</sup> Մեջբերումն ըստ՝ **Марченко А.** Поэтический мир С. Есенина. М., 1989, էջ 167:

<sup>9</sup> Տես նույն տեղը, էջ 167:

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 167:

<sup>11</sup> **Субботин А.** О поэзии и поэтике. Свердловск, 1979, с. 187-188.

ևս կարող է թարգմանչական սխալների պատճառ դառնալ:

Եսենինի գունապնակում ոսկեգույնի ու դեղինի տարբեր երանգներ կան՝ **желтый, лимонный, овсяной, соломенный, ржаной** ևն: **Лимонный**-ն Եսենինի համար սառը գույն է, որով նա սովորաբար բնութագրում է լուսնի աղոտ լույսը՝ “Тонкий лимонный лунный свет”, “Жидкая лимонная заря”, “На душе - лимонный свет заката” ևն: Թարգմանիչներից մեկը այս մակդիրը փոխարինել է «բորբ» ածականով:

Չոգուս իջել է մի բորբ մայրամուտ (Չր. Թ., 59):

Այս փոխարինումը բացարձակապես արդարացված չէ. ինչպես ցույց են տալիս բերված օրինակները, **лимонный**-ն Եսենինի պոեզիայում սառը գույն է: Համեմատելու համար բերենք Չ. Սահյանի թարգմանությունը, որն ավելի հարազատ է բնագրին. գույնի սառնությունն էլ ավելի է շեշտվում «պաղ» ածականի հավելումով:

Պաղ վերջալույսի լինոնե լույս է իմ հոգու վրա (391):

Եսենինի պատկերներից շատերն անցնում են բանաստեղծությունից բանաստեղծություն՝ լրացվելով նորանոր մանրամասներով. պոետի այս կարևոր ոճական առանձնահատկությունը թարգմանիչները պիտի հաշվի առնեն:

Օրինակ՝ **рыжий, желтый** մակդիրներով հաճախ բնութագրվում է Եսենինի հաստատուն բառ-խորհրդանիշներից մեկը<sup>12</sup> լուսինը՝ “Месяца желтые чары”, “Месяца желтая прелесть”, “Рыжий месяц” ևն: Այս պատկերը կա նաև հետևյալ բանաստեղծության մեջ:

Рыжий месяц жеребенком

Запрягался в наши сани (I, 97):

Չ. Սահյանն աղավաղել է բնագիրը. «սահնակին լծված շեկ լուսնի» պատկերն անհետացել է՝ փոխարինվելով չգիտես որտեղից հայտնված «շլդիկ նապաստակով»:

Տեսա՝ *շլդիկ նապաստակին*

Բռնել էի մտրուկի պես,

Բերել լծել իմ սահնակին (246):

Վարդագույնը Եսենինի պոեզիայում երիտասարդության, պատանեկության խորհրդանիշն է:

Словно я весенней гулкой ранью

Проскакал на *розовом коне* (I, 125):

Սևակը վարդագույնը փոխարինել է այլ հոմանիշով՝ կարմիր:

Գարնան մի զնգուն առավոտ կարծես

*Կարմիր նժույգով* սլացա վռագ (280):

Եթե ուրիշ պարագայում այսպիսի փոխարինումը կարելի էր և ընդունելի համարել, Եսենինի պոեզիայի համար սա անընդունելի է. կարմիրը միանգամայն այլ սինվոլիկա ունի նրա համար:

Կամ՝ վաղ շրջանի բանաստեղծություններից մեկում առաջին անգամ հայտնվում է **шапка-месяц**-ի պատկերը՝ “На рассвете он (=месяц) завтра

<sup>12</sup> Եսենինի հաստատուն պատկերների մասին ավելի մանրամասն տե՛ս **Ա. Քամալյան**, Ս. Եսենինի չափածոյի հայերեն թարգմանությունների լեզուն, թեկն. առենախոս., Եր., 2001:



промчится, Шапку-месяц пригнув под кустом” (193), որը կրկնվում է տարբեր տարիների բանաստեղծություններում՝ “О, месяц! Месяц! Рыжая шапка моего деда”, ”Из kota того сделали шапку, А ее износил мой дед”: Սակայն այսքանով պատմությունը չի ավարտվում. կատվի մորթուց գլխարկը կա մի այլ բանաստեղծության մեջ՝ “Сидит мой рыжий дед... И та кошачья шапка, Что в праздник он носил, Глядит, как месяц” (I,230):

Այս գլխարկը մի անգամ էլ հայտնվում է վերջին տարիների գործերից մեկում.

Шапку из кошки на лоб нахлобучив,  
Тайно покинул я отчий кров.

Եվ վերջում.

Молча комкаю я новую шапку,  
Не по душе мне соболий мех (I, 199):

Նախորդ օրինակները նկատի առնելով՝ հասկանալի է դառնում, թե ինչու է հին, մաշված գլխարկն այդքան թանկ հերոսի համար, և ինչու նրան դուր չի գալիս իր նոր գլխարկը: Սակայն թարգմանիչը «կատվի մորթուց գլխարկը» փոխարինել է պարզապես «մաշված գլխարկ»-ով, ինչն արդարացված չէ, որովհետև այդ գլխարկի հետ չափից դուրս շատ հուշեր են կապված.

Մաշված գլխարկս ճակատիս թեքած  
Թողեցի ես քեզ, հարազատ տնակ:

Եվ

Ծնվում եմ լռին մորթին գլխարկիս,  
Օ՛, իմ սրտով չէ սամույրը այս թանկ (Վ. Դ., 381):

Եսենիմի պոեմներից մեկում՝ “Черный человек”-ում, «սև մարդը» հայտնվել է գիշերով ու հանգիստ չի տալիս: Նա դաժան է, անխղճորեն փորփրում է բանաստեղծի հոգին՝ երեսին շարտելով դառը ճշմարտությունը.

Черный человек,  
Черный, черный,  
Черный человек

На кровать ко мне садится,

Черный человек спать не дает мне всю ночь... ևն:

Եսենիմի «սև մարդը» բանաստեղծի «մութ կեսն է», նրա ներսի չարի, վատի խորհրդանիշը: Եվ պատահական չէ, որ «սև» մակդիրը պոեմում կրկնվում է 13 անգամ: Ինչպես գիտենք, շատ ազգերի մշակույթում 13 թվի հետ կապված յուրահատուկ սիմվոլիկա կա. այն դիվական, սատանայական խորհուրդ ունի: Ուստի շատ կարևոր է նաև թարգմանության մեջ կրկնությունների քանակը պահպանելը: Հեղինակի մտահղացումը հաշվի չառնելու, ստեղծագործության ընդհանուր համատեքստը չընկալելու պատճառով, միգուցե և անուշադրության հետևանքով Եսենիմի բավականին լավ թարգմանության մեջ «սև» մակդիրը կրկնվում է ընդամենը 10 անգամ:

Թարգմանությունը բարդ գործ է, և թարգմանիչը ոչ միայն պիտի փայլուն իմանա բնագրի լեզուն և այն լեզուն, որով թարգմանում է, այլև տվյալ ժողովրդի պատմությունը, սովորույթները, մշակույթը, կենցաղը, թարգմանվող հեղինակի ապրած ու նկարագրած ժամանակաշրջանը, հեղինակի լեզվաոճական առանձնահատկությունները ևն: Թարգմանչական

սխալներից լրիվ խուսափել թերևս դժվար է, հատկապես երբ խոսքը պոետիկ թարգմանության մասին է, բայց հնարավոր է այդ սխալները հասցնել նվազագույնի:

**АРЕВИК КАМАЛЯН – Основные причины переводческих ляпсусов.** – Переводческие ляпсусы происходят по нескольким основным причинам:

- недостаточное владение языком оригинала (омонимические ошибки);
- ошибки из-за неправильного усвоения контекста;
- непонимание реалий;
- неумение различить особенности индивидуального стиля автора оригинала.

Ошибки делают не только неопытные, случайные переводчики, от них не застрахованы также серьезные, профессиональные переводчики. Это показывают и приведенные в статье примеры из армянских переводов стихотворений С. Есенина.

**AREVIK KAMALYAN - The Main Reasons for Translation Errors.** – In this article the most common translation errors have been examined. There are several main reasons for those:

- Insufficient knowledge of the original language (homonyms, paronyms, polysemy, etc.)
- Errors that are the result of not understanding the context
- Insufficient knowledge of the reality described in the original (not understanding the realia)
- Errors that are the result of not understanding the author's linguistic and stylistic characteristics

Not only inexperienced translators make errors, but also the well experienced and professional ones, as it can be seen in the quoted examples from the Armenian translation of S. Yesenin's poetry.